ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարան» հիմնադրամի
ուսումնագիտական աշխատանքների
հարցերով պրոռեկտոր
_____Բ. Մարգարյան

30. 11. 2020 թ.

ՔԱՂՎԱԾՔ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի հայագիտության ամբիոնի՝ 2020 թվ. նոյեմբերի 27-ի նիստի արձանագրությունից:

ՕՐԱԿԱՐԳ՝ Գայանե Ավետիսյանի «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» թեկնածուական ատենախոսության քննարկում:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ բ.գ.դ., պրոֆ. Գ. Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Հեքեյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Դոխոյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Գ. Վերդյանը, ավագ դասախոսներ Շ. Մուրադյանը, Մ. Համբարյանը, Ռ. Ասատրյանը, Ս. Բալայանը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ հայագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Գ. Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Գևորգյանը, բ.գ.թ. Գ. Վերդյանը:

Եզրակացություն

Ելույթ ունեցողները նշեցին, որ բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի կատարելագործումը նպաստում է հիմնական դպրոցի միջին օղակում սովորողների գրավոր և բանավոր կապակցված խոսքի զարգացմանը, անձի հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, միջանձնային հարաբերություն-ների կարգավորմանն ու անձի սոցիալականացմանը: Այս առումով Գ. Ավետիսյանի «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» ատենախոսու-թյունը արդիական է և կարևոր: Հետազոտության առարկան հիմնական դպրոցում

բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան է: Ատենախոսը, որպես հետազոտության թեմա ընտրելով բազմիմաստ բառերի ուսումնասիրման հիմնախնդիրը հիմնական դպրոցում, կարևորել է ուսուցման հաղորդակցական-գործառական մոտեցումները և հայոց լեզվի՝ որպես ազգային ինքնագիտակցության ձևավորման կարևորագույն գործոնի, արդյունավետ ուսուցման անհրաժեշտությունը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է սովորողների գրավոր և բանավոր խոսքում բազմիմաստ բառերի իմացությամբ, նաև միջին դպրոցի հայոց լեզվի ծրագրերում և դասագրքերում խնդրի ոչ պատշաճ լուսաբանմամբ:

Հետազոտության նպատակը հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկա մշակելը և այն հիմնական դպրոցի միջին դասարաններում փորձարկելն է՝ հիմք ընդունելով լեզվական այդ իրողության հաղորդակցական-գործառական հատկանիշները: Կարևորելով թեմայի ընտրությունը՝ ատենախոսը կարծում է, որ հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրումն արդյունավետ կլինի, եթե մշակվի և ներդրվի մեթոդական այնպիսի համակարգ, որը կօժանդակի սովորողների բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը:

Իր նպատակին հասնելու համար ատենախոսն առաջադրել է մի շարք խնդիրներ: Նա ուսումնասիրել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, մանկավարժական, մեթոդական գրականություն, վերլուծել է հիմնական դպրոցի հայոց լեզվի չափորոշիչները, ծրագրերը և դասագրքերը, իրականացրել բազմիմաստ բառերի գործառական և իմաստաբանական հատկանիշների տիպաբանական վերլուծություն, մշակել և հիմնական դպրոցի միջին օղակում փորձարարական ուսուցմամբ ստուգել է բազմիմաստ բառերի ուսումնասիրման նպատակը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ «բազմաբնույթ ուսումնասիրությունների հիման վրա մշակվել և հիմնական դպրոցում ներդրվել են բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկա, ուսուցման սկզբունքների, վարժությունների, առաջադրանքների, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների և մանկավարժական պայմանների համալիր, մշակվել և փորձարկվել են բազմիմաստ բառերի ուսումնասիրման դասերի աշակերտակենտրոն մոդելներ» (տե՛ս սեղմ., էջ 5): Գ.

Ավետիսյանը բազմիմաստ բառերի ուսումնասիրման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը հետազոտելիս անդրադարձել է բազմիմաստության ուսումնասիրման պատմատեսական նախադրյալներին, տարրական դասարաններում բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդիկային և միջին դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրման գործընթացին:

Անդրադառնալով բազմիմաստ գոյականների ուսումնասիրման սկզբունքներին ու մեթոդական հնարներին՝ ատենախոսը կարծում է, որ թեմայի ուսումնասիրումը նպաստում է սովորողների բառապաշարի հարստացմանը, ինչպես նաև խոսքի ու լեզվամշակութային կարողունակությունների զարգացմանը: Անդրադառնալով գոյականների իմաստային-թեմատիկ խմբերի բազմիմաստությանը՝ կարևորվում են անձնանիշ և իրանիշ գոյականները, որոնց առանձնացումը լեզվում ունի կարևոր ճանաչողական նշանակություն՝ նպաստելով սովորողների բառապաշարի հարստացմանը: Բազմիմաստ անձնանիշ և իրանիշ գոյականների ուսուցման ժամանակ ատենախոսը առաջարկում է կիրառել ուսուցման փոխներգործուն, մակածման պրոբլեմային-որոնողական մեթոդները և դրանց օգնությամբ ուսուցանել բազմիմաստ գոյականների տեսակներն առանձին-առանձին: Գոյականների ձևաիմաստային խմբերի բազմիմաստության ուսուցման դեպքում ուսումնասիրվում են նաև համանունություն, հոմանշություն և հականշություն ունեցող բազմիմաստ գոյականները:

Ատենախոսը կարծում է, որ միևնույն բառի իմաստային ծավալում կարող են հանդես գալ մի քանի իմաստներ, որոնց առկայությունը ենթադրում է նաև խոսքիմասային տարբեր արժեքների համատեղում կամ տվյալ դեպքում քերականական-ձևաբանական (գոյական/ածական, ածական/մակբայ և այլն) բազմիմաստություն (**գերի**- 1. ռազմագերի (գ.), 2. գերեվարված (ա.), 3. հրապուրված (ա.), 4. հլու, հնազանդ (ա.)) և այլն: Այս կարգի բառերի ուսուցումը կարող է ամբողջացնել բազմիմաստ գոյականների ուսումնասիրման ծրագրային նյութը:

Բազմիմաստ բայերի դեպքում ևս կարևորվում են բայերի իմաստային-թեմատիկ, ձևաիմաստային խմբերի բազմիմաստությունը ու նրանց ուսումնասիրման մեթոդական քայլաշարերը: Վերոնշյալ քերականական նյութը ատենախոսը առաջարկում է մատուցել ԽԻԿ համակարգով: Բայական բազմիմաստ բառերի ուսուցման գործընթացում ատենախոսը կարևորում է բայական բառույթի իմաստային-թեմատիկ այնպիսի խմբերի

առանձնացումը, որոնք ցույց են տալիս շարժում, տեղափոխություն, գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ, մտավոր-հոգեկան և հասարակական կյանքին վերաբերող գործողություններ, առարկայի վիճակն իբրև եղելություն: Մեթոդական այս համակարգի միջոցով ուսուցիչը ոչ միայն հարստացնում է սովորողների քերականական գիտելիքները, այլև զարգացնում է նրանց մտածողությունը:

Բայական բազմիմաստ բառերի ուսուցման հիմնահարցերից են բայիմաստի էությունից բխող սեռի և սեռային զուգորդումների, կրկնասեռության վերաբերյալ քերականական հիմնավոր գիտելիքների հաղորդումն ու ամրապնդումը: Քերականական այդ կարգի գիտելիքները կարող են նպաստել խոսք կառուցելու հմտությունների ձեռքբերմանը և խոսքային մշակույթի զարգացմանը: Հատկապես կարևոր է անցողական և անանցողական բազմիմաստ բայերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ըստ իմաստային բաշխման՝ թե՛ մեկ և թե՛ մյուս սեռադասի մեջ ներառվող բազմիմաստ բայերի վերաբերյալ գիտելիքների հաղորդումը:

Ատենախոսությունում ուսումնասիրության առարկա են դառնում բազմիմաստ որակական և (**մութ** – 1. ոչ լուսավոր, 2. փխբ. տգետ, հետամնաց), հարաբերական ածականները (**ցամաքային** – 1. ցամաքին հատուկ, 2. ցամաքում ապրող), անդրադարձ է կատարվում համեմատության աստիճաններ ունեցող և չունեցող բազմիմաստ որակական ածականներին և նրանց ուսուցմանը, բազմիմաստ որակական ածականների իմաստային–թեմատիկ խմբերին, որոնք ցույց են տալիս առարկայի ներքին հատկանիշ, մարդկանց մտավոր-բարոյական հատկանիշներ և այլն: Այնուհետև տրվում են բազմիմաստ հարաբերական ածականների իմաստային-թեմատիկ խմբերը:

Մակբայների բազմիմաստության վերաբերյալ դասանյութը ուսուցանելիս ատենախոսը կարևորում է վերլուծական-համադրական մեթոդի կիրառումը, որի միջոցով կարելի է անցկացնել հատկանշային բազմիմաստ բառերի ուսուցումը: Այդ բառերն ուսուցանվում են ըստ բազմիմաստ մակբայների քերականական իմաստների: Տրվում են նաև տարարժեք բազմիմաստ հոմանիշ, հականիշ մակբայների ուսուցման եղանակները՝ որոշակի առաջադրանքներով: Ատենախոսը, ըստ իր կազմած հարցաթերթիկի, կատարել է նաև բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի փորձարկման արդյունքների դիտարկում:

Աշխատանքն առավել անթերի տեսնելու ցանկությամբ ունենք որոշ նկատառումներ:

1. Ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխներում Գ. Ավետիսյանը, ըստ իմաստային-թեմատիկ և ձևաիմաստային խմբերի, քննում է բազմիմաստ գոյականներն ու բայերը՝ կարևորելով բազմիմաստ գոյականների և բայերի ուսումնասիրման ընթացքում նրանց իմաստային-քերականական և ձևաիմաստային խմբերի բացահայտումը: Քննելով լեզվական նույնատիպ երևույթներ՝ ատենախոսը ցուցաբերում է տարբեր մոտեցումներ: Դա երևում է վերոնշյալ գլուխների ենթագլուխների ձևակերպումներից: Այսպես՝ 2-րդ գլխում /տե՛ս ատեն., էջ 2/ բազմիմաստ գոյականների ուսումնասիրումը առանց մեթոդական քայլաշարի է ներկայացվում /2.1. **Բազմիմաստ գոյականների ուսումնասիրման սկզբունքներն ու մեթոդական հնարները**, 2.2. **Թանձրացական և վերացական գոյականների բազմիմաստության ուսումնասիրումը**, 2.3. **Գոյականների ձևաիմաստային խմբերի բազմիմաստության ուսումնասիրումը**/, իսկ 3-րդ գլխում /տե՛ս ատեն., էջ 2/ բազմիմաստ բայերի քննությունը ներկայացվում է մեթոդական քայլաշարի միջոցով /3.1. **Բայերի իմաստային-թեմատիկ խմբերի բազմիմաստությունն ու նրանց ուսումնասիրման մեթոդական քայլաշարը**, 3.2. **Բայերի ձևաիմաստային խմբերի բազմիմաստությունն ու նրանց ուսումնասիրման մեթոդական քայլաշարը**, 3.3. **Բայական բազմիմաստություն և փոխաբերություն. նրանց ուսումնասիրման մեթոդական քայլաշարը**/: Կարծում ենք՝ անհարաժեշտ էր կիրառել նույն սկզբունքը:

2. Եզրակացություններից առաջ ատենախոսը «Բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի փորձարկման արդյունքների դիտարկում» վերնագրի տակ ներկայացնում է իր կատարած փորձարկման արդյունքները, սակայն հասկանալի չէ, թե ատենախոսության այդ հատվածը (15 էջ) որ գլխում է զետեղված, առանձին գլու՞խ է, թե՞ ոչ:

Բացի այդ թեև վերոնշյալ հատվածում ներկայացվում են բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի փորձարկման արդյունքները, սակայն դրանց արդյունքների դիտարկումից եզրահանգումներ չեն արվում: Եզրակացությունների մեջ նույնպես անդրադարձ չի կատարվում փորձարկման արդյունքներին:

3. Աշխատանքում ատենախոսը չի անդրադառնում համանունության և բազմիմաստության սահմանազատմանը, որը, ինչպես հայտնի է, բառագիտության կնճռոտ հարցերից է, ուսուցման գործընթացում դրանց տարբերական մեթոդական համալիր չի առաջադրում:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ մեր դիտարկումները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, և այն կարող է բավարարել թեկնածուական ատենախոսության ներկայացվող պահանջները, ուստի նրա հեղինակը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԲՊՀ հայագիտության ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Գ. Գևորգյան

Նիստի քարտուղար՝ Ա. Վարդանյան

ԲՊՀ գիտքարտուղար՝ Հ. Փիլավջյան

30. 11. 2020 թ.